## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

## ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **17 հունվարի 2025թ.**

2025թ-ի հունվարի 15-17-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Է. Հովհաննիսյան՝ | Մեծամոր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, |
| Ն. Մնացականյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ-հողաշինարար, |
| Ս. Սահակյան՝ | Մեծամորի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ, |
| Վ. Ղազարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, |
| Լ. Խաչատրյան՝ | Մեծամորի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Է. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Հ. Գուլաբյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
2. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

5. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15.01.2025թ-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «Ստրոյ-գրուպ» ՍՊԸ-«Արհովշին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից կողմից սահմանված ժամկետում և կարգով՝ ներկայացվել է արձանագրված անհամապատասխանություններից՝ գնային առաջարկի փաստաթղթի, համաձայն՝ Հավելված 2-ի, շտկված տարբերակը, սակայն չեն ներկայացվել ծավալաթերթ-նախահաշիվի փաստաթղթի և դիմում-հայտարարության փաստաթղթի, համաձայն՝ Հավելված 1-ի, շտկված տարբերակները, միաժամանակ՝ ներկայացված գնային առաջարկի փաստաթուղթը էլեկտրոնային-թվային ստորագրությամբ հաստատված է այլ անձի կողմից, ում լիազորագիրը «Ստրոյ-գրուպ» ՍՊԸ-«Արհովշին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից տրված է 02.10.2023թ-ին՝ 1 (մեկ) տարի ժամկետով, ուստի՝ 2025 թ-ի հունվարի 15-ին «Ստրոյ-գրուպ» ՍՊԸ-«Արհովշին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացվող փաստաթղթերը չէին կարող հաստատված լինել տվյալ անձի կողմից:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

17.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Ստրոյ-գրուպ» ՍՊԸ-«Արհովշին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, Ընթացակարգի իրավերի առաջին մասի 8.10 կետով սահմանված պահանջների համաձայն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետը իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «Ստրոյ-գրուպ» ՍՊԸ-«Արհովշին» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ - «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում՝ | անբավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

17.01.2025թ-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ).

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ըտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Փարոս-Գազ» ՍՊԸ | | 78647917.5 |
| | «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «Արտ Պլաս» ՍՊԸ կոնսորցիում | X | 69645000 |
| | «Արտաշատի ԷՅՇ» ՍՊԸ | | 91665845 |
| | «ԱՐՄՇԻՆ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ - «ԷՆՔԱՂՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիում | | 79001328 |
| | «ՊՐԵՄԻՈՒՄ ՇԻՆ» ՍՊԸ - «Գրին Օպշոն» ՍՊԸ - «Ճանշինվարպետ» ՓԲԸ կոնսորցիում | | 77000000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 1-ին կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաբյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում 04.09.2023թ-ին ներկայացվել է հարցում, որին համակարգի միջոցով՝ 04.09.2023թ-ին տրվել է պարզաբանում:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ «Ստրոյ-Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք, որի արդյունքում ԵԴ2/36956/02/23 դատական գործի շրջանակում Դատարանի կողմից կայացվել է որոշու, որը իրականացվել է Հանձնաժողովի կողմից:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Է. Հովհաննիսյան __________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ն. Մնացականյան __________

Ս. Սահակյան __________

Վ. Ղազարյան __________

Լ. Խաչատրյան __________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան __________